

Հայ գրականության մարզային օլիմպիադա

Հարցաշարերի պատասխաններ

11-րդ դասարան

1. Միջնադարի նշանավոր առակագիր Վարդան Այգեկցին եղել է հոգևոր գործիչ և քարոզիչ, գրել է ճառեր ու խրատներ, սկիզբ է դրել Առակավոր ճառի տեսակին, գրել է փոքրիկ պատմություններ, սրամիտ զրույցներ, մանրավեպեր:

Այգեկցու ծննդյան ու մահվան թվականները ստույգ հայտնի չեն: 1229-ին գրված նրա խրատներից մեկից պարզ է դառնում, որ նա բավական առաջացած տարիքում է եղել, ուստի կարելի է ենթադրել, որ նա ծնված պետք է լինի 1150-ական թթ. և մահացած 1230 –ականներին: Խրատների մեջ նա գրում է . «...ողորմելոյս Վարդանայ որ ի Մարաթայ...», որից հասկանալի է դառնում, որ ծնվել է Կիլիկիայի Տլուք գավառի Մարաթա գյուղում:

Կրթությունը ստացել է Սև լեռան Արքակաղին վանքում, դարձել այդ վանքի եղբայրության անդամ: Ստացել է վարդապետի աստիճան, եղել շրջիկ քարոզիչ Ամիդում և Տլուքում:

1198-ին մասնակցել է Կիլիկիայի արքա Լևոն Բ-ի թագադրության արարողությանը:

Սակայն նրա կյանքում ևս եղել են դժվար ժամանակներ:

Կյանքի որոշ շրջանում, նյութապես նեղված, զրկված գրքերից ու ապահովագրությունից, Այգեկցին վարել է հալածական-թափառական կյանք:

Այդ շրջանի մասին նա գրում է. «...զի հալածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ յերկրեն Կիւրիսոյի գասառէն Տլքոյ և եկայք Այգեկս..»

Հավանական է, որ նա հալածվել է ուղիղ ճանապարհի կոչ անելու համար, քանի որ տեսել է «բազմաթիվ մեղքեր և ավելի շատ գաղտնաբար լսել»:

1212-ին նա ապաստան է գտել Այգեկ վանքում, այստեղ էլ ապրել կյանքի մնացած տարիները: Այգեկի անունից էլ նա կոչվել է Այգեկցի: Նա երկար է ապրել. Իր գրվածքներում ներկայացել է այսպես. «..քանզի խավարեցաւ միտք իմ յաշխարհիս և նուազեցան լոյս աջաչս եւ տկարացան ծերութեամբս..», «..ես գարշելի եւ մեղաւք ծերս..»:

Այգեկում Վարդան վարդապետը ծավալել է գրական աշխույժ գործունեություն: Պաղտին իշխանի համար գրել է 22 ճառ:

Գրել է խրատական 5 թուղթ, առակներ, զրույցներ:

Միայն 17-րդ դարում Այգեկցու առակները տպագրվել են չորս անգամ:

Առաջին հրատարակությունը կոչվել է «Գիրք աշխարհաց և և առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք»:

Սրան հաջորդել են այլ հրատարակություններ: Տպագրվել են նաև նրա քարոզներն ու թղթերը: Ծանրակշիռ աշխատություն է Ն.Մառի եռահատոր ուսումնասիրությունը՝ «Վարդանաց վարդապետի Այգեկցւոյ խրատք»:

Սակայն նրա ժառանգությունը գրական հետաքրքրություն է ներկայացնում առակներով: Նա ոչ միայն գրել է առակներ, այլև դրանք կիրառել է իր ճառերի մեջ. դրանք ոչ միայն իր ստեղծանքներն են, այլև ուրիշների: Նա օգտագործել է 13 առակ մ.թ.ա VI մեծ առակախոս Եզրպոսից և 8-ը «Բարոյախոս» -ից :

Մանուկ Աբեղյանն այն կարծիքն է հայտնում, որ ուսումնական նպատակով ստեղծվել են առակների ժողովածուներ, այդ առակները մշակվել և մեկնաբանվել են ու վերագրվել Այգեկցուն: Արդար լինելու համար նկատենք, որ այդ գրքերի «կենտրոնը» եղել են Այգեկցու առակները, և պատահական չէ, որ առակների այդ ժողովածուները նախապես կոչվել են «Վարդանագիրք», ապա՝ տպագրվել «Աղվեսագիրք» վերնագրով:

Այգեկցու առակները սրամիտ պատմություններ են, որոնք ավարտվում են «Ցուցանե առակս» խրատաբարոյախոսական մասով:

Նրա առակներում ծաղրի կամ քննադատության են ենթարկվում հոռի բարքերը, այն ամենը, ինչը խախտում է պատվիրանների կարգը՝ շնության, գողության, սպանության, նա ծաղրում է բոլոր նրանց, ովքեր ապրում են ուրիշի հաշվին:

Նա դրվատում է դրական հատկանիշները և ըստ հարկի պատժում ազահությանը, խարդախությանը, հիմարությանը, չարախոսությանը, չկամությանը («Այրի կին և որդի», «Արջ և աղվես», «Կաթ մեղու պատճառ պատերազմի», «Չիմար և ձմերուկ» և այլն):

Այգեկցին փառաբանում է մարդկային խելքն ու հնարամտությունը, արդար աշխատանքը («Կտակ վասն գանձի», «Եզն և ձի», «Եկեղեցի և ջրաղաց»):

1930-ական թվականներին Ակսել Բակունցը Այգեկցու քառասուն առակ փոխադրել է, սակայն դուրս է թողել բարոյախոսական մասը: Նա այն կարծիքն է հայտնում, թե Այգեկցին կարող է կոչված լինել նաև Այգեկցի միաբանության ոչ թե Այգեկ, այլ Այգի անվանումից: Բակունցը նրա մասին գրել է. «Նա մեկն է այն գագաթներից, որոնց վրայով է անցնում միջնադարյան հայ քաղաքային մշակույթի սահմանագիծը»: Քանի որ Այգեկցու առակները քաղաքացիական կյանքի ծնունդ են: Այգեկցու որոշ գործեր, ըստ էության, ոչ թե առակ են այլ մանրավեպ («Իմաստուն դատավորը», «Գինի», «Թագավոր և օձ», «Արվեստ կնոջ» և այլն):

Չենց այս գործերն են, որոնք ձևավորեցին հայ միջնադարյան արձակի զարգացման հունն ու ընթացքը:

2. Նար-Դոսը (Միքայել Չովհաննիսյան) հայ հոգեբանական գրականության հիմնադիրներից և լուրջ վարպետներից է: Նրա արվեստը մեր գրականության «հարատև փառքերից մեկն է»: Նար-Դոսի գրականությունը լավագույնս հասկանալու և ճանաչելու բանալին տալիս է Ավետիք Իսահակյանը իր դիպուկ բնութագրմամբ. «Ամենանուրբ արվեստագետի վարպետությամբ կարողանում էր նա իր համակրանքն ու հակակրանքը այս կամ այն կերպարի կամ երևույթի հանդեպ գաղտնաբար ներարկել ընթերցողի մեջ: Եվ ընթերցողը հեղինակի հետ միասին սիրում է նրա սիրած տիպարը և ատում նրա ատած կերպարը: Նա կատարում էր հասարակական կրթիչի դեր, որը, վերջին հաշվով, ամեն գրողի և՛ թաքուն նպատակն է, և՛ գրականության իմաստը»:

Չիրավի, Նար-Դոսի նրբահյուս ստեղծագործությունը բազում սերունդների է կրթել. Մենք նրա հետ կիսել ենք իր հերոսների ցավը և, ինչպես ինքը, մենք էլ ուրախանալու չնչին պատճառ ենք ունեցել:

Նար-Դոսը համոզված էր, որ «գրականությունը կյանքի հայելին է, բայց միայն դրանով չի սահմանափակվում նրա դերը, նա կյանքի դպրոցն էլ է: Չայելու

մեջ ցույց է տալիս, որ ճակատին մուր է քսված, բայց միջոց էլ է սովորեցնում այդ մուրը մաքրելու »: Եվ նրա ողջ գրականությունը ներծծված է իրապաշտության և հոգեբանական ամենաճշմարիտ վերլուծությամբ: Նար-Դոսն իր գրական կեղծանունը ստացել է «Նոր դար» թերթի քարտուղար Դանագյոզյանի (Մուշե վարդապետ) կողմից , որը Մ.Յ. անունը համարելով վիպասանի համար ոչ հարմար և, չգիտես ինչու, գտնելով, որ վիպասանը պետք է կեղծ անուն ունենա, ինչպես Րաֆֆի, Ծերենց, Մուրացան, «Առձեռն բառարանից» ընտրում է նրա համար «Նար-Դոս» բառը, որ նշանակում է բուրավետ ծաղիկ:

Հետագա տարիները ցույց տվեցին Մուշե վարդապետի անսխալականությունը, քանի որ Նար-Դոսի ստեղծագործությունը մինչև հիմա էլ անուշաբույր է ու ցանկալի:

1888-1899թ.թ. Նար-Դոսը գրում է իր անգուգական նովելաշարը (պատմվածաշարը), որը իրապաշտական նրբարվեստ գործ է: Նովելաշարը վերնագրված է «Մեր թաղը», խոսուն մի վերնագիր, որը պատկերում է քաջահայտ մեծ քաղաքի խուլ ու խավար մի ծայրամասի «Խեղճ, աղքատ դասակարգի չարքաշ կյանքից», թաղամաս, որտեղ տիրում են «մտավոր թանձր խավարը, նախապաշարումները, մանավանդ կնոջ սոսկալի վիճակը»: Շարքն ընդգրկում է յոթ նորավեպ` «Ինչպես բժշկեցին», «Սաքուլն ուխտ գնաց», «Յոգուն վրա հասավ», «Յոպոպը», «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց », «Սև փողերի տոկոսը», «Աղամամուրի», որոնց բոլորի «գլխավոր հերոսը կարիքն է »:

Բոլոր նորավեպերի հերոսները կործանվում են խավարի ու թշվառության միջավայրում գոյություն ունեցող սնահավատության, տգիտության, վայրագության, կոպտության , հարբեցողության, բարոյական անկման պատճառով:

Այս ամենի համար մեղավոր չեն զոհ-հերոսները, մեղավոր է մարդու իդեալների և իշխող հասարակության խզումը: «Խեղճ ու թշվառ» կյանքի սոցիալ-քաղաքական պատճառները հմուտ գեղանկարչի վրձնով պատկերված են բոլոր նորավեպերում:

Սնտիապաշտ Մարթան հավատում է «դևերի ու սատանաների գոյությանը», կորցնում հոգեկան հավասարակշռությունը և անկողին ընկնում: Խորամանկ ու խաբեբա «գրբաց ու հեքիմ» Գրիգորը օգտվում է հոր և աղջկա սնտիապաշտությունից, կորզում է մի կլորիկ գումար և սպանում աղջկան` գործի դնելով իր ամբողջ «հնարամտությունը»:

Մարթան մեռնում է, իսկ չարագործը ապրում է մինչև օրս և խաբում միամիտ ու սնահավատ մարդկանց:

Հրաշալի հյուսն (դուրգար) Սաքուլը նույնպես տգիտության, սնահավատության զոհ է` հավատալով գրբացին նորից դիմում է ուխտագնացության: Ընտանիքն ընկնում է ծայր աստիճան չքավորության ու պարտքերի մեջ, գրավ է դրվում անգամ խարխուլ խրճիթը....բայց Սաքուլին փրկել չի հաջողվում . անգամ տասը շախի չի կարողանում վճարել աղքատ հիվանդների բուժարանում տեղավորվելու համար: Անտարբեր են ամենքը` կապալառուն, գործատերը, հարևանը, քանի որ ամենքն էլ ապրում են նույն տգիտության մեջ:

Դժբախտ կանանց մի հրաշալի պատկերասրահ ունի Նար-Դոսը՝ Մային՝ օրնիրուն աշխատող, օտարների համար կար ու լվացք անող դժբախտ կինը ստրկական վիճակում է : Նար-Դոսը խոր ցավով ու ցնցող գույներով է նկարագրում «սիրուհու չափ տենչալի ու մահվան չափ անդիմադրելի» ոգելից խմիչքից զրկած նախշքար Դավթի ընտանիքը:

Ցնցող է Անանի վախճանը. Այս փխրուն, փոքրամարմին, խոնարհ, աշխատասեր, սարսափից քարացած աչքերով աղջիկը՝ 20-ամյա Անանը գիժ Զոռոմսիմի հարսն է, դրոգապան Յագորի կինը, որը մարդկային չար ու բիրտ բնավորության, անխղճության ու բթամտության զոհ է:

Բոլոր նորավեպերի հերոսները կարիքի, թշվառության, տգիտության, չարության զոհեր են, և Նար-Դոսը քննադատում է ժամանակի հասարակության սոցիալական խոցերը, բարոյական արատները, խաթարված հոգեբանությունը:

3.Գրող, հասարակական գործիչ, իրավագետ և անմրցելի ճարտասան Գրիգոր Չոհրապը 20-րդ դարի հայ իրականության խիղճն է, դատավորն ու փաստաբանը:

Ծնվել է 1861-ին Կոստանդնուպոլսում: Ստացել է հրաշալի կրթություն: Նա գրական ասպարեզ է իջնում իր տաղանդավոր ժամանակակից՝ Նար-Դոսի նշանաբանով՝ «Գրականությունը հայելի է» , ինքն էլ որդեգրելով նմանատիպ մի նշանաբան՝ «Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար »: Նա իր ամբողջ կյանքը անմնացորդ ծառայեցրեց ժողովրդին ու գրականությանը՝ ստեղծելով հրաշալի նորավեպեր, որոնք ամփոփված են «Կյանքը ինչպես որ է», «Լուռ ցավեր», «Խղճմտանքի ձայներ» ժողովածուներում:

Չոհրապն անմրցելի է թե՛ գրական, թե՛ փաստաբանական – հասարակական ոլորտներում:

Նորավեպի իշխան պատվանունը կրող այս հզոր հայը մինչ օրս մնում է հայ դատի ամենաանզիջում պաշտպանը: Փաստաբանական անուրանալի տաղանդի շնորհիվ նրան հաջողվում է փրկել բազմաթիվ մարդկանց՝ անկախ ազգությունից ու ունեցվածքից: Նա, հայ լինելով հանդերձ, Ուսանել է Օսմանյան իրավագիտական համալսարանում: Նա ընտրվել է Ազգային ժողովի երեսփոխան, թուրքական Մեջլիսի մեբուս, գրական և հասարակական բազմաթիվ ընկերությունների անդամ և նախագահ: Դեռևս 1913-ին նա հրատարակել է հայկական դատին նվիրված աշխատություն «Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ » խորագրով:

Չոհրապը միշտ է եղել «պատնեշի վրա»: 1914-ի պատերազմը նա համարում է «մահացու վտանգ» մեր ժողովրդի համար և այնուհետև նա իր ամբողջ գործունեությունը նվիրեց հայության փրկությանը: 1915-ի արհավիրքի օրերին նա հրապարակով դեմ կանգնեց տեղահանության վճռին, ջանում էր օգտագործել իր բոլոր ծանոթություններն ու վայելած համակրանքը՝ փրկելու հայրենակիցներին:

Նա անգամ սպառնաց Թալեաթին, թե «Օր մը ձեզմե հաշիվ կպահանջեն» և այդ պահանջատերը ինքն է լինելու:

Նրան չձերբակալեցին 1915-ի ապրիլի 24-ին, «ազատության » մեջ լինելով նա մնացյալ բոլոր դատապարտյալների հույսն էր, նրանք հավատում էին

Չոհրապի կարողություններին, սակայն վատ էին ճանաչում թուրքին, Թալեաթին՝ «Ով համբուրելով այտը Չոհրապի, համբուլրով տվեց մահվան ահազանգ»:

Չոհրապին ձերբակալում են 1915-ի մայիսի 20-ին, նրան Վարդգես Սերինգուլյանի հետ սրախողխող են անում հուլիսի 7-ին: Բազմաթիվ հայորդիներ ցանկանում են փրկել նրան՝ փախցնելով հյուրանոցից, բայց նա համառորեն հրաժարվում է, ինչպես հրաժարվել էր Թալեաթի՝ Պոլսից հեռանալու առաջարկին՝ ասելով. «Որուն թողնիմ սա անտեր ժողովուրդը»:

Հայ ժողովրդի շուրթերին աղոթքի նման հնչում են հայ բոլոր նահատակների անունները և այդ շարքում Չոհրապի լուսավոր անունը, հայ դատի մեծագույն պաշտպանի, մեծ մարդասերի, մեծ բարոյախոսի անունը:

Չոհրապը իրապաշտական գրականության հսկաներից է, նա որդեգրել էր «ութսունականների» պատգամներից ամենաարդիականը «Պատկերել կյանքը ինչպես որ է»: Նա գրում է մերժվածների և աղքատության դատապարտվածների կյանքի մասին՝ վերլուծում հոգեկան և բարոյական անկումներն ու վերելքները:

Չոհրապի նովելներից շատերը ոչ միայն հասարակական բարքերի քննադատությունն էին, այլև խեղճերի, որբերի դատի պաշտպանություն: Կնոջ կերպարը Չոհրապի նորավեպերում թարմություն էր՝ հոգեբանական խոր վերլուծություններով, սիրո ապրումի հրդեհով, խաբվածության լուռ ցավով, ինչու չէ, նաև թույլ ընդվզմամբ:

Անտրտունջ ու լուռ հնազանդությամբ ենթարկվող Չարդարին հակադրվում է «Երջանիկ մահ»-ի անանուն հերոսուհին: Չարդարի մեջ խտացել է սպասման ողջ ահավորությունը: Կարեկցելով Չարդարին՝ հեղինակը դատապարտում է անսեր ամուսնությունը, կնոջ ստրկական վիճակը: Հոգեբանական այս լայնաշունչ կտավի վրա երևում են պանդխտության կործանարար պատճառները, հետևանքները:

Տիգրանուհին որբ է, խեղճ ու անպաշտպան ընտանիքի հարս: Ածխագործ ամուսինը անդամալույծ է դառնում. Տղայի ծնողները չարացած են «չբեր» հարսի դեմ: Միամիտ աղջիկը Պոլսում է: Սուրբիկ հանրմի տանը. Այստեղ էլ զոհ է դառնում նրա որդու՝ Օննիկի ցինիզմին ու լկտիությանը: Իսկ հանրմը նրան փոստալ-անբարոյական էանվանում, դուրս շարտում տնից. Սուրբիկ անվան տակ ապրում է անսուրբ, եսամոլ, անբարո մի հրեշ, որի համար անբարոյականությունը կեցվածք է ու կեցություն:

Բոլորովին այլ է Վասիլիկը. Նա ցուցամուլ է, նյութապաշտ. Գիշերային աստղերի տակ տված սիրո երդումը դառնում է դավաճանություն, ուրեմն այստեղ արտաքսված է սերը:

Իսկ ի՞նչ է սերը, սիրո առեղծվածը ըստ Չոհրապի՝ «Կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ անիկա լացի փոխվի»:

Այս սկզբունքի կրողը «Երջանիկ մահը» նորավեպի ազատ, անկաշկանդ ու սիրառատ հերոսուհին է, որը գերադասում է մեռնել սիրած տղամարդու բազուկների վրա՝ արհամարհելով հասարակաց կարծիքը: Չոհրապը բանաստեղծական նրբին վրձնահարվածներով ներկայացնում է կանանց հոգում ծվարած անթարգմանելի զգացումները: Հոգեբանի իր խառնվածքով նա թափանցում է նրանց հոգու ծալքերը, սիրո դրամայի ամենամուլթ անկյունները: Նրա պատկերած կանայք գրավիչ են, սեր ու հրապույր են

արձակում, բայց բախտահալած են ու ընկած, մարդկային եսասիրության ու անհրավության զոհեր են:

4.XX-րդ դարասկզբին անկումայնության ու փախուստի տրամադրություններն էին իշխում բոլոր գրողների ստեղծագործություններում, և նրանք ապավինում էին խարհրդապաշտական ուղղության՝ մարդու «խորհրդավոր ծալքերի» բացահայտմամբ: Հայոց գրական կյանքում այն իր բուռն հորդմանը հասավ ի դեմս Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի, Լևոն Շանթի: 1909-ին՝ 40 օրվա ընթացքում, Շանթը գրեց իր «Հին աստվածներ» դրաման, որն արմատապես հեղաշրջում էր հայ դրամատուրգիան, հերքում ավանդական կամ քարացած պատկերացումները նրա հնարավորությունների մասին: «Հին աստվածներ» խորհրդանշում են նախաստեղծ ազատությունն ու վայելքները, անկաշկանդ ու աննախապաշարմունք աշխարհիկ կյանքը, որն արգելված էր Սևանա կղզու անապաստականների մոտ: Այս վանականները ամենատարբեր օրենքներից ու սահմանափակումներից ճնշված, կամավանկամա ստեղծված հոգևոր ու մարմնավոր շխթաններից իսպառ հոգնած մարդիկ են, որոնք չունեն նպատակ, երազանք, ձգտում: Ինքնափնտրումը շարունակվում է Ասվածի լավագույն օրինակը խորհրդապաշտության գեղարվեստական սկզբունքներով մտահղացված Ճերմակավորի և Վանահոր կոնֆլիկտի բացահայտումն է: Վերոնշյալ տողերը հենց այդ կոնֆլիկտի բացահայտում են և բնութագրում են Վանահորը, որն ամեն կերպ փորձում է լռեցնել իր ներքին ձայնը՝ Ճերմակավորին:

Վանահայրը արտաքուստ անխռով է, հաստատակամ, բայց նրա խոսքում նրբորեն զգացվում է հոգեկան տագնապ ու երկվություն: Ամեն ինչ փոխվել է: Կղզին անհանգիստ է. Ինչ-որ բան խարխլվել է: Վանահայրն զգում է, որ Ճերմակավորն իրեն հաղթում է. «Կուգա օրը, ու կխոստովանիս»:

Նա տառապում է. իշխանը կարծես խորացնում է տառապանքն ու կասկածը. «Ձեր անապատը ուրիշ է, վանահայր, ուրիշ է դուրսը: Դուրսն հանդուրձն եխոխինն է աշխարհը»: Վանահայրը հորդորում է. «Կյանքը խաչ մըն է, որ պիտի կրենք մեր ուսին»:

Վանահայրը բավականին անողոր է ինքն իր հանդեպ և դժվարանում է խլացնել երկբա ճշմարտություններ գուժող իր իսկ ներքին ձայնը: Իսկ ներքին ձայնը հաստատում է մեծ ուժի զորությունը, որից սասանվում ու հիմնահատակ կործանվում են մարդկային կամքն ու ձգտումը բանտող ամենախրոխտ տաճարներն անգամ: Որպես վերջին կռվան վկայակոչվում է. «Հոն կթագավորե միայն հոգին...»: Եվ պարտվում է անպարտելի թվացող Վանահայրը, որովհետև «հին աստվածների» կանչին առաջինը արձագանքում է Աբեղան՝ Վանահոր գաղափարի ու դավանանքի հարատևության հույսը:

**Գնահատման չափանիշներ
11-րդ դասարան**

**1 հարց - 1-ին` 1 միավոր, 2-րդ` 1 միավոր, 3-րդ` 2 միավոր,
4,5-րդ` 0,5-ական միավոր:**

**2 հարց - 1,2-րդ` 0,5-ական միավոր, 3-րդ` 1,5 միավոր, 4-րդ` 1,5 միավոր,
5-րդ` 1 միավոր:**

3 հարց - 1,2-րդ` 0,5-ական միավոր, 3,4-րդ` 2-ական միավոր:

4 հարց - 1,2-րդ` 1-ական միավոր, 3-րդ` 3 միավոր;